

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍ

Ա. Վարչության առաքելությունը

Բարելավել այն պայմանները, որոնք նպաստում են բոլորի լիարժեք առողջությանը և լավ ինքնազգացողությանը

Հանրային Առողջության Վարչությունը կարծում է, որ բոլորի համար արդյունքները բարելավելու նպատակով պետք է ջանքերը կենտրոնացնել առավել խոցելի անձանց վրա և նրանց համար հասանելի դարձնել այն ամենը, ինչի կարիքն ունեն առողջ և լավ վիճակում լինելու համար: Հիմնական ռազմավարություններից մեկը լեզվին և մշակույթին համապատասխան ծառայություններ և տեղեկատվություն առաջարկելն է: Սա թույլ է տալիս մարդկանց հասկանալ տեղեկատվությունը, կայացնել տեղեկությունների վրա հիմնված որոշումներ, լիարժեք մասնակցել ծրագրերին և պաշտպանված մնալ հնարավոր վնասներից: Սա նաև թույլ է տալիս Հանրային Առողջության Վարչությանը բարելավել հանրային առողջապահությանը վերաբերող հաղորդակցությունը, խթանել լավագույն գործողությունների կիրառումը և բարելավել առողջության արդյունքները:

Բ. Վարչության առաջնահերթ լեզուները

Հանրային Առողջության Վարչությունը սպասարկում է Լոս Անջելեսի Շրջանը, որը 10 միլիոն բնակիչների տունն է և միլիոնավոր մարդկանց համար՝ ճամփորդության վայր: Այս բազմազան համայնքին օժանդակելու համար բոլոր տեղեկությունները տվում են [հանրամատչելի լեզվի սկզբունքներով](#), փաստաթղթերը թարգմանվում են բազմաթիվ լեզուներով, և հաճախորդները կարող են ստանալ բանավոր թարգմանության ծառայություններ իրենց նախընտրած լեզվով:

Գրավոր թարգմանություններ

Փաստաթղթերի մեծ մասը պատրաստվում է 11 շեմային լեզուներով (լեզուներ, որոնցով խոսում են սահմանված թվով բնակիչներ)՝ արաբերեն, հայերեն, կամբոջերեն, չինարեն (ավանդական/պարզեցված), անգլերեն, կորեերեն, պարսկերեն, ռուսերեն, իսպաներեն, տագալերեն և վիետնամերեն: Հանրային Առողջության Վարչությունն այժմ օգտագործում է Կալիֆորնիայի Առողջապահության Ծառայությունների Վարչության՝ [Լոս Անջելեսի Շրջանի շեմային լեզուների](#) ցանկը: Սակայն Հանրային Առողջության բաժինները նյութերը թարգմանում են այլ լեզուներով՝ հիմնվելով մի քանի գործոնների վրա, ինչպիսիք են՝ 1) համայնքում, որտեղ մատուցվում է ծառայությունը, խոսում են լեզվով (լեզուներով), որն ընդգրկված չէ շեմային լեզուների մեջ, 2) հիմնվելով տվյալների վրա՝ բնակչության որոշակի խումբ ունի առաջարկվող ծառայության կարիքը, և 3) համայնքից լինում է խնդրանք՝ նյութերը տրամադրել որոշակի լեզվով: Սկսած 2023 թվականի օգոստոսից՝ թարգմանություններ են կատարվել շեմային լեզուներից բացի 27 այլ լեզուներով:



Բանավոր թարգմանություններ

Միայն 2024 թվականին Հանրային Առողջության կլինիկաները սպասարկել են մոտ 12485 հիվանդների, որոնց խոսելու հիմնական լեզուն ոչ թե անգլերենն էր, այլ 44 այլ լեզուներից մեկը, այդ թվում՝ մի քանի մեզոամերիկյան բնիկ լեզուներ և մի քանի ժեստերի լեզուներ: Անկախ լեզվից՝ երբ նախատեսված թարգմանիչը չի կարողանում ներկա լինել հանդիպմանը կամ երբ անձնակազմի երկլեզու անդամը հասանելի չէ կամ լավ չի տիրապետում լեզվին, հանրությանը սպասարկող ծրագրերում կիրառվում են պահանջի դեպքում տրվող թարգմանչական ծառայություններ տեսակապի կամ հեռախոսագանգի միջոցով: Հանրային Առողջության Վարչությունը նաև համագործակցում է լեզվի հասանելիության տարբեր մատակարարների հետ՝ բանավոր թարգմանության, այդ թվում՝ ժեստերի լեզվով թարգմանության համար:

